№ 3 ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼ 13

1897

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼ 13 № 3

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան. կէս տարւանը 6 ղրան: Առանձին համարները 6 շահի:

Ընտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարւանը 6 ֆր. կամ բուբլի:

Ընտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև ժամը. բացի կիրակի և տօն օրերի:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն եզով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Ընտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:
Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեզ և ձեզ մեծ աւետիք Քրիստոս յարեաւ ի մեռելոց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այսուեղ էլ պարագիաներ. Մինչև երբ քծնել. Նամակներ խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ.—ԵՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռագիրներ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵԶ ԵՒ ՁԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՔ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ

Սրանք և սրանց նշանակութեամբ են այն մի քանի խնդակցական և շնորհաւորական բառերը, որ այսօր մեքենայաբար դուրս են թռնում ընդհանուր քրիստոնեայ ազգերի անհատների բերաններից: Մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ, այսօր Յարութեան տօնի առթիւ, խնդութեամբ, շնորհաւորակա՛ ողջոյնները են տալիս միմեանց, հրճւում ու խնդում են, ապագայ երջանիկ ու երկար կեանք են մաղթում միմեանց, սիրում ու սիրւում են նրանք:

Բայց ինչ է անում խեղճ հայն այսօր. այդ է հարցը:

Սևաթոյը քողով ծածկւած, տխուր ու տրտում, մերկ ու քաղցած, որդեկորոյս, մայրակորոյս, հայրակորոյս, դժբաղտացած, թշւառացած և տաք մոխրի վրայ նստած հայը՝ այսօր իր գլուխը քարշ արած, իր կմաղքացած ձեռքերը կուրծքին վրայ դրած, արիւնախառն արտասունքները իր աչքերից թափելով՝ հեծում է, լալիս է, ողբում է դառն սրտով: Ողբում է նա իր թանգ կորուստները, ողբում է նա իր անցեալը, իր ներկան, իր ապագան:

Նրա անցեալը դառն ու տաժանելի անցաւ, ներկան անտանելի և ապագան խիստ մռայլ:

Խեղճ հայ, միթէ այս իր եղկելի վիճակում նա սիրտ ունի, Քրիստոսի սուրբ Յարութիւնը շնորհաւորելու. միթէ նրան սիրտ ու միտք մնացել է, որ նա կարողանայ յիշել թէ Քրիստոսը իր փրկիչը եղաւ, իր համար զոհւեց, մեռաւ և յարեաւ: Ո՛չ, կողբանք որ նա այսօր, սիրտ միտք և յիշողութիւն չունէ սրանք մտածելու, նա մոռացել է ամեն բան, մոռացել իր հոգին, իր մարմինը և իր Փրկիչը: Նա հաղիւ ժամանակ է գտնում սրբել իր աչի արցունքները, հոգալ ու մտածել թէ «արդեօք մէկ ժամից յետ կենդանի կը լինիմ թէ ոչ»: Նա, ամեն բոպէ, հալւելով ու մաշւելով, սպասում է թիւրք վայրագի արիւնոտ սրի հարւածին. նա դողալով ու սարսափելով սպասում է տեսնել իր մատաղ զաւակին, իր երիտասարդ կոյսին, իր գարնանացած որդուն մորթւած ու կոտորւած իր աչքի առաջ. նա սպասում է շուտով գտնել նոյն իսկ իրեն թիւրք անիրաւի գազանային ճիրանների մէջ: Աւա՜ղ այս է խեղճ հայի մտածմունքը այսօր:

Այսօր, այո՛ այսօր. որ մինչդեռ մեր քրիստոնեայ հայրերն ու մայրերը զարդարւած ու պճնւած, իրենց զաւակներին առաջ տւած, ուրախակտն քայլերով դիմում են դէպի եկեղեցին աղօթելու Աստուծոյ, մի և նոյն ժամանակ խեղճ ու տառապեալ հայը՝ իր մերկ ու դժբաղտ զաւակներին առաջ տւած, յուզղողթ քայլերով առաջ է գնում մուրալու մի կտոր չոր հաց: Մինչդեռ օտար քրիստոնեաներ, այսօր «մեզ և ձեզ մեծ աւետիք» են ողջունում միմեանց՝ կիսամեռ հայը «ինձ և քեզ թրքի սուր» է ողբում: Մինչդեռ քրիստոնեաների տներից այսօր խնջոյքի և երաժշտութեան քաղցր ձայներ են բարձրանում՝ մի և նոյն ժամանակ տարաբաղտ հայի կիսաւեր տներից անիրաւ քիւրտ գազանի սրի շառաչիւնն է բարձրանում: Մինչդեռ մեր քրիստոնեայ եղբայրների տնից տաղաւարների և թմբուկների ձայն է բարձրանում՝ թշւառ հայի տնից վայրագ ոսոխի ատրճանակի և հրացանի բոմբիւնն է բարձրանում: Մինչդեռ առաջինների տներից համեմների անուշ հոտ է բուրում՝ աւա՜ղ դերի հայի տնից արեան և դիակների գարշահոտութիւն է բարձրանում: Մինչդեռ մեր քրիստոնեայ եղբայրներն ու քոյրերը, ձեռք ձեռքի տւած, խնդալով կաքաւում են, աւա՜ղ, միևնոյն ժամանակ, խեղճ հայն, ինքն, իր կինն, իր զաւակներն, անիրաւ քիւրդի և թիւրքի հետ մարտնչում են ի մահ:

Ահա՜, այս է աչքից ընկած, թշւառ հայի վիճակը այսօր:

Անտէր, անտուն, ապքստ և ամեն կողմից զրկւած հայն, այն ամեն սոսկումները, արհաւիրքները, աղէտներն և տանջանքները, այս երկու տարւան ընթացքում կրելուց յետոյ, դեռ պիտի կրէ, կրէ և կրէ. բայց մինչև երբ, այդ չը գիտէ:

Նա դեռ պիտի պոռայ ազատութիւն, դեռ պիտի շատ աղաչէ ու պաղատէ. բայց աւա՜ղ, չը կայ նրան տեսնող, չը կայ նրան լսող, չը կայ նրա մահացու վերքերին դարմանող. նա չունի ցաւակից և խիղճ ունեցող քրիստոնեայ եղբայր. նա մնացել է, և դեռ պիտի մնայ թշւառ ու դերի, և դեռ պիտի շատ սոսկալի զոհեր տայ թիւրք բարբարոսի մահածու լծին սև սրին:

Հայի քրիստոնեայ եղբայրներն-այդ անսիրտ ու անխիղճ դիպլոմատները, տեսնում ու դիտում են նրա վիճակը. բայց արդեօք ինչ օգնութիւն սպասենք նրանցից: Ազատութիւն, այդ կեղծաւորների և շահամոլների ձեռքով, քաւ լիցի: Այնքան դիմեցինք, այնքան աղաչեցինք ու պաղատեցինք, այնքան սպասեցինք, այնքան համբերեցինք, և այնքան յուսախաբ եղանք որ շնչաւսպառ դիակներ դարձանք. բայց ո՞վ լսեց մեր ձայնն, բացի դարձեալ նոյն իսկ այն անիրաւ բռնակալից, որ լսելով՝ աւելի և աւելի նեղն գձեց մեզ, բարդեց իր բարբարոսութիւններն մեր վրայ: Ա՜հ որչափ խաբեցինք, որչափ յիմարացանք, ահա՜ այդ է մեծ ցաւը:

Անտերունչ ու անմռունչ հայն խաղալիք է դարձել եւրոպական պետութիւնների շահամոլութեան առաջ: Եւրոպան դեռ ժամանակ չունէ զբաղւել հայով, և նրանից յոյս չը կայ հայի համար: Եւրոպան աւելի սիրում ու պաշտում է Մահմէդին քան Քրիստոսին: Եւրոպայի համար Քրիստոսը միայն այն ժամանակ սիրելի կը լինէ երբ շահի խնդիր կայ իր համար. նա միշտ իր աչքի առաջ ունի Պոլիսը նա չը գիտէ Հայաստանն ինչ է. նա սիրում է շփւել թիւրքին, սիրել թիւրքին, պաշտել ու պահպանել նրան բայց խեղճ հային խպառ բնաջինջ անել:

Այն բոլոր քաղաքականութիւնները, որ Եւրոպան այսօր գործ է դնում խեղճ հայի և հայի քրիստոնեայ եղբայր յոյնի վերաբերմամբ, բոլորովին կեղծ են, անօգուտ են մեզ համար: Թող թշւառ հայը լցէ եւրոպական պետութիւնների քաղանցները, արտասունքով լւանայ նրանց փոշիոտ կոշիկները, դարձեալ օգուտ չը կայ:

Եւրոպան արձանացել է, նա հայի ողբասանաց ձայնը չէ լսում. նրան ինչ փոյթ, եթէ այսօր հայ ազգը իսպառ վերջանայ: Նա խուլ է, չէ կարող լսել հայի աղեկտուր ձայնը. նա կոյր է, չէ տեսնել իր քրիստոնեայ եղբօր խղճալի վիճակը:

Բայց ո՞չ, չարաչար սխալւում ենք, նա ոչ կոյր է, և ոչ խուլ. նա շահամոլ է, իր շահը նա որոնում է մի այլ տեղում, նա դեռ օտար մտածմունքներով է զբաղւած....:

Ողբացէք հայեր, ճգնաժամն հասաւ. այո՛ լացէք ու ողբացէք, այս աշխարհը մեզ համար դժողք է, այս կեանքը մեզ համար խիստ դառն ու տաժանելի է: Մենք զրկւած ենք ամեն բանից, ամեն կողմից. ցաւակից սիրտ, օգնական ձեռք չը կայ մեզ համար. մեզ մնում է մաքառել, կռւել, ջարդւել ու մեռնել թիւրք բարբարոսի սրի տակում. բայց մեռնել քաջութեամբ:

Թող այսօր յարութիւն առած Քրիստոսը գոնէ լսէ մեր ձայնն, թող յառաջ գայ նա դէպի մեզ, օգնելու մի անհովիւ և անտէր ժողովրդի:

Բայց միթէ ինչ կարող է անել խեղճ Քրիստոսն մեզ համար..... կռւե՛լ, յաղթե՛լ, յաղթւե՛լ....:

Այս հարցին պատասխան չեմ կարող տալ: Մեր ճակատագիրը, մեր կրած սոսկալի տանջանքները, մեր տւած բոլոր զոհերը, մեր այսօրւան կեանքի դառնութիւնը՝ մեզ մոռացնել են տւել հաւատքը, յոյսն ու սէրը. մոռացել ենք Քրիստոսին....:

Ո՞վ Երկինք, մեղաւոր ենք քո առաջ. բայց միթէ բա՜ւ չը համարեցիր այս ամեն պատուհասները միթէ որչափ մեղաւոր ենք որ քաւութեան արժանի չենք, որ մեզ ներել չես կամենում մինչ յաւիտեան:

Թշւառ հայ, դու քո բանդ մտածիր ազգ ու ազինք, երկինք ու երկիր մոռացել են քեզ, ատում ու անարգում են քեզ: Միայն դժոխքն է բաց քեզ համար. քեզ համար չը կայ ուրիշ ճար, եթէ ոչ ոտքի ելնել, յառաջ երթալ, անիրաւ ու չար ոսոխի դէմ կուրծք կրծքի տալ, տապալել ու գլորւել. մեռնել ու մեռցնել, և վերջապէս վերջ տալ կամ վերջանալ: Այո՛, միայն այս ճանապարհն է մնում բաց մեր առաջ. կամ մեռնենք ու վերջանանք՝ կամ մեռցնենք ու ազատւենք....:

Առ այժմ, խե՜ղճ հայ, թող քո սրտի լող մխիթարութիւնը այն լինի՝ որ քո քրիստոնեայ եղբայր յոյնն էլ, այսօր վեց պետութիւնների քաղաքականութեան հոսանքի մէջ թաւալւում է, կայնում ու գլորւում է: Բայց ո՞չ, յոյնը քաջ է, ապստամբ է, նա ունի իրեն համակիր, ցաւակից, քաջ ու անձնւէր ազգակիցներ. իսկ ինչ ունես դու, խեղճ հայ, բացի մատնիչ, հայատեաց, ազգուրաց ու դաւաճան ազգակիցներից:

Ա՜խ խեղճ հայ, ինչ էիր, ինչ դարձար, և դեռ ինչ պիտի դառնաս: Հայկայ անուն լսողը սարսափում էր, իսկ այժմ հայ անուն լսողը նողկում է, թքում է հայի երեսին, մեղադրում

ու պախարակում է քեզ թշուառ հայ։ Քրիստոնեայ եղբայրներիդ մօտ ոչինչ նշանակութիւն ունես. փուշ ես պիտի այրուես։

Ահա՛, կրկնում եմ, այս է անբաղդ հայի վիճակը այսօր։

Այս վիճակին մէջ, ինչպէս «մեզ և ձեզ մեծ աւետիք» կարող կը լինէ ասել հայը. քա՜ւ լեցի նա չէ կարող։ Նա պիտի ողբալով գոռայ «ինձ մահ, քեզ հուր ու վայ, ո՛վ կոյր Եւրոպայ»։

Հայեր, հարցնում եմ, ի՞նչ անենք, վհատե՞նք թէ քաջալերուենք, յուսահատե՞նք թէ սիրտ առնենք ու սիրտ տանք միմիանց։ Ո՛չ, չենք վհատուել, չենք յուսահատուել, այլ հանապազ կը յորդորենք միմեանց, ձեռք ձեռքի կը տանք, կօգնենք միմեանց, միասին կը մաքառենք ու կը մարտնչենք, կը գլորուենք ու կը կայնենք, մինչև տեսնենք ինչ վախճանի կը հասնենք. և մենք միայն այն ժամանակ «Քրիստոս յարեաւ» կը շնորհաւորենք՝ երբ յարութիւն առած Քրիստոսը, օգնական հրեշտակներ կուղարկի դժբաղդներիս ազատելու. իսկ այժմ, պիտի ողբանք,

Մեզ և ձեզ մի տխուր լուր
Մեզ կը սպասէ սուր ու թուր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՍՏԵՂ ԷԼ ՊԱՐԱԶԻՏՆԵՐ

Դավրէժի մահմետական ազգաբնակութիւնը, մի չնչին պատճառի համար, յուզուած է նոյն տեղի հայերի դէմ, նրանց տներն կողոպտում է, և նրանց հալածանքի ու կոտորածի ենթարկել է սպառնում.... ա՜հ ինչ ենք լսում մենք այսօր. մի լուր պարսկահայի վերաբերմամբ, որը շատ օտարոտի է հնչում նրա ականջին, մի երևոյթ, որը բոլորովին անծանօթ է նրա աչքին։

Եւ ինչ ենք տեսնում։ Պարսկաստանում մահմետական ամբոխը յանկարծ բորբոքուած, կատաղած է հայի դէմ, այն հայի, որի հետ դարերից ի վեր նա ապրել է հաշտ ու համերաշխ, որի հետ նրա յարաբերութիւնը միշտ կրել է մի պարզ ու համակրական բնաւորութիւն։

Զը նայած հայ ու պարսիկ տարրերի մէջ վաղուց գոյութիւն ունեցող կրօնական ու ազգային մեծ անջրպետին և չը նայելով որ հայը այս երկրում եղել է մի հպատակ ու պարսիկը իշխող ազգ, այդուամենայնիւ այն աչքի ընկնող հանդստութիւնն ու անդորրութիւնը որ շատ անգամներ վայելած է պարսկահայը իր կեանքի մէջ մի նախանձելի հակապատկեր է ներկայացնում իր տաճկահայ եղբայրների դրութեան. մի երևոյթ, որի առաջ պիտի ամաչեն իրենց քրիստոնեայ կոչուող պետութիւններն իսկ.....։

Եւ սակայն երևոյթը պիտի վերագրել երկու որոշ հանգամանքների։ (!) Հայը մահմետական հասարակ ամբոխի հետ միասին գտնուելով միևնոյն տնտեսական հանգամանքների մէջ, միշտ լինելով նրա հետ լծակից ու համերաշխ առօրեայ կեանքի պայմանների մէջ այլ և կրթութեան ու կուլտուրայի համարեայ միևնոյն աստիճանի վերայ կանգնած. հետևաբար այդ տեսակէտից նրանց մէջ թշնամութեան ոչ մի առիթ չլինելուց զատ, այլ ընդ հակառակը նրանց մէջ միշտ գոյութիւն է ունեցել մի տեսակ միութիւն ու համակրութիւն, որը յատուկ է նահապետական կեանքի նոյնանման հանգամանքներում ապրող ժողովրդներին։ 2) պարսկահայը իրենից բարձր դասակարդից—պետական շքանից շնորհիւ իր մարդասէր շահերի, բարձրագոյն հովանաւորութեան ու հայասիրութեան, միշտ վայելած է մի շարք մասնաւոր առանձնաշնորհումներ որոնցից զուրկ են նոյն իսկ քրիստոնեայ պետութիւններում ապրող շատ հայեր.....։

Այո, պարսկահայը ամեն ժամանակ իր գլխի վրայ տեսել է մի հովանաւորող ձեռք մի պահապան զօրութիւն, մի զօրութիւն, որի առաջ միշտ փշրուելու խորտակուել է Ֆանատիկոս իսլամութեան այն մոլի սիրն ու ատելութեան ոգին, որը կոյր մոլեռանդութեամբ պատրաստ է ամեն վայրկեան բռնկել, բորբոքել թափելու իր մէջ եղած թոյնը իսլամութիւնից դուրս եղող ամեն բանի վերայ և վայրենաբար աւերման ու կործանութեան ճարակ դարձնելու իր շրջապատը եղող ամեն ինչ.....։

Եւ այսօր, մահմետականութեան հենց այդ սարսափելի լալված տրամադրութիւնից օգտուելով ինչպէս շատ տեղերում, նոյնպէս և այստեղ, պարսկաստանում ստոր խաբեբաները, մարդկութեան ներսոնները, որոնց նպատակն է հազարաւոր մարդկային զոհերի մէջ տեսնել իրենց պետութեան շահը և որոնց նմանները դեռ ևս մինչև կոկորդ թաթախուած են անթիւ անմեղների տաք արեան մէջ, փորձում են ներս սպրդեցնել իրենց ապետալի ու մարդախոշոշ քաղաքականութեան ստոր ինտրիգները մի այնպիսի խաղաղ երկրի մէջ ինչպիսին է Պարսկաստանը, որը ուրիշ ճիւաղ բռնակալների երկրի նման աւերումների ու կոտորածների հանդիսատեղի, արիւնախում գազանների մի արեան և վերջապէս եւրոպական սոփեստ քաղաքականութեան ու կոկոզավիզ դիպլոմատների բարբանջանքների առարկայ լինելու ոչ մի փափագ չ'ունի...

Հաւատացնում ենք այդ խարդախ աղուէսներին, որ իրեց կազմած այդ ըստոր պլանը չը պիտի որ և է յաջողութիւն գտնէ այստեղ, այդ միայն այն երկրներում կարող է իր ցանկալի հետեւանքն ունենալ, որոնց ինքնակալ ընդունակ է ստեղծել ամեն տեսակ բռնութիւն, անարդարութիւն, կոտորած և աւերում։ Եւ սակայն մենք հրճւանքով հիմնուելով անցեալի ուրախալի փաստերի վերայ պիտի ասենք որ պարսկահայը իրեն ընդմիշտ երջանիկ է համարում, քանի որ իր վեհապետի ամենաողորմած հովանաւորութեան ներքոյ է տեսնում իրեն։ Եւ մենք մի վայրկեան չենք վարանում կարծելու որ նորին կայսերական վեհափառութիւն Շահի կողմից արդէն բարձրագոյն հրամաններ եղած են շփոթութիւնը բոլորովին խաղաղեցնելու և յուզուած ժողովրդի ամենափոքրիկ իսկ շարժումների առաջն առնելու։

Մնում է յուսալ որ շուտով Դավրէժի մահմետական ժողովուրդը արթնանալով պիտի հասկանայ խնդրի բուն էութիւնը և զգալով օտարոտի մի յետին կեղտոտ ներկայութիւնը գործերի մէջ պիտի մի անգամ ընդ միշտ հրաժարուի իր առաջ այս քայլից և զգուշանայ իր բռնած ներկայ այն ընթացքից. որը կարող է անզգալապէս իջեցնել նրան մի ըչ-ցանկալի վերջաւորութեան, մի չը երևակայած հետևանքի.....։ Ի՞նչ ուրեմն իմանայ պարսիկ ժողովուրդը որ իր կոյր մոլեռանդութեա՞մբ չը պիտի անգիտակցաբար գործիք դառնալով ուրիշներին ձեռքում, նոյնասէ այդպէսով նրանց չար նպատակների իրագործման և խանգարէ պարսկաստանի խաղաղ ու հանգիստ դրութիւնը...։

Ս. Մ. Զ.

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ ՔԾՆԵԼ

Ապրիլ $^{4}/_{16}$-ին բողոքականների Հաստանաքաղ թաղի եկեղեցում տեղի ունեցաւ մի ընդհանուր ժողով՝ երեցների և սարկաւագների ընտրութեան և տարեայ հաշիւը քննելու համար։ Ժողովում ներկայ էին ընդ ամենը (հայ և ամերիկացի) $^{25}/_{8}$ անդամ, որից $^{13}/_{8}$-ը ամերիկացի և $^{12}/_{8}$-ը հայերը էին, իսկ 3 թուանշանի ամբողջութիւնը լրացնող $^{3}/_{8}$-ը հետևեալ կերպով էր բաժանում։ Հայերի դասում, պուչաւոր ատաղի նման փայլում էր $^{1}/_{8}$ քոսոտ նորահաւատ հրէայ, իսկ միւս $^{2}/_{8}$-ը արձանագրութեան մէջ վերապահուեց մէկը կաղ և միւսը սպասող այն նորահաւատ պարսիկներին, որոնք վերջերս Զուղայի հայերին կատաղի մահմետական խուժանին մատնելով այսօր Թէհրանի բարիների գրկումը կը ննջեն և երբեմն երբեմն էլ սուրբ, սուրբ, սուրբ ես «Միրզայ Հիւսէին Ալի» կը բացականչեն։ Ժողովին նախագահում էր ամերիկացի Պաստորը, որը իր ձեռքում ունէր սուրբ գիրքը, իսկ աջ ձեռքում միաբետական դաւազանը, որ անգլիերէն կոչւում է Presbyterian։

Ժողովը բացուեց ժամը 4-ին (ըստ եւրոպ) նախ հրաժարական տուեցին հին երեցները և ապա գլուխ բարձրացրեց նոր ընտրութիւնների վիճաբանութիւն և դալմաղալը... թէ ի՞նչ կծու խօսքեր փոխանձուեցին և երբեմն էլ կատականեր դիտողութիւններ եղան, Բիզմարք իշխանի հռչակաւոր ահագին դդում գլխի փշրանքները ներկայացնող այդ $^{25}/_{8}$ ժողովականների մէջ, դորա մանրամասնութեան մէջ չը պիտի անցնեմ. միայն, թէ ընտրութիւն և թէ վիճաբանութիւնները ներկայացնում էր մի սքանչելի «կոմէդիա» որը ներկայացնելու համար թերևս անզօր գտնուէին եւրոպայի ամենանշանաւոր «արտիստները»... թէև եղաւ ընտրութիւններ, բայց այդ ընտրութիւնները ապացուցեց ժողովականների մեծամասնութեան կատարեալ տգիտութիւնը... այս «կոմէդիան» լրացրեց հայ «Պաստոր» պատ. Միհրան Տամատեանը, իր հեանեալ ճառովը։ «Այո՛ սիրելի եղբարք և քերք, չը պիտի մոռանալ, որ մեզանից ամեն մէկը պարտաւոր է նախ մաքուր լուանալ իր հոգին, մէկ կողմը նետէ իր ատելութեան ակնոցը, գրպանը դնէ համերաշխութեան քսակը և ապա մտնէ Աստուծոյ այս սուրբ տաճարը. թող որ միանանք և Աստուծմէ խնդրենք որ ժողովականների թիւը լրացնող $^{2}/_{8}$ անդամն էլ մեզ շուտով պարգևէ, և այնպէս մի հոգով և կտոր կտոր սրտով գործենք Աստուծոյ համար։ Զը կարծէք թէ ես, կամ մեր այս ամենասիրելի հայրիկը ցոյց տալով ամերիկացի Պաստորին, որ ժողովին նախագահում էր—փողի համար ենք Աստծուն ծառայում, ոչ, լթէ այդպէս լինէր ան ատենը պիտի պոռայինք բարձրաձայն բոռալով վա՛յ մեզ... վա՛յ մեզ... և վա՛յ մեզ, վասն զի երկնից թագաւորութեան մէջ մենք պիտի լինէինք միմեանց կողքի կանգնած այն զէրոնները, որ զրկուած են ձախակողմեան (մէկի) պաշտպանութիւնից»... այստեղ խեղճ Պաստորի ձայնը խեղդուելով այտերից վար գլորուեցին արտասուքի երկու խոշոր կաթիլներ... տեղն էր հարցնել կրօնական հռետորիցը, թէ մինչև ե՞րբ քծնել օտարների առաջ, և եկեղեցու ամպիոնի վրայ, ո՞վ չի գիտեր թէ ոչ դու, և ոչ էլ քու (ոչ ուրիշների) նորաբոյս եանքի հայրիկը, Խրիմեան Հայրիկի աչքը լոյս, և ոչ էլ աշխարհիս ամենաբարձրէն սկսած մինչև ցածը արարածը սռանց մամոնայի, հօրն անգամ չի ծառայել.. . Կրօնականներ, ո՞ւմ էք ուզում խաբել, անցա՛ւ միամտութեան և կրօնական նախապաշարմա՛ն դարը, ուր ժողովուրդը, կղերներից և կրօնականներից, երկայն ականջների նման արածելու էին քշւում։ Այո՛ ձեր այդ վայրերին պիտի հաւատայի ես միայն այն ժամանակ, երբ դուք կամ ձեր «եանքի» հայրիկը մի քանի ամիս աչք դցելով կլոր սո՛ղիներից, ձրի և միանգամայն առանց որ և է վարձատրութիւն սպասելու ծառայ էիք «Նախախնամին» իսկ թէ չէ, հրապարակաւ ձեզ յայտնելու պատիւն ունիմ, որ դուք էլ ինչպէս մի նպարավաճառ, կոշկակար կամ մսավաճառ, կրօնական վաճառք էք հրապարակ հանել, որի համար բաւական թւով մուշթարի հաւաքելու համար ամպլիոնի ճակատիցը ամեն տեսակ «կոմէդիա» կը խաղաք... չը մոռանամ յիշելու նաև թէ, ժողովի ժամանակ, պարոններից մէկը դիմելով «եանքի» հայրիկներից մէկին, ականջը կանչէ Խ. հայրիկինը խնդրեց որ ի սէր եկեղեցուն այս ինչ թեթև ծառայութիւնը անէ. և որ ստացաւ հետևեալ պատասխանը. «ոչ պարո՛ն մենք (ամերիկացիները) եկել ենք այստեղ միայն (կրօնական) ուսուցչութեան և ոչ թէ աշակերտութեան. ուստի այդ առաջարկը միայն ձեզ է պատգանում և ոչ թէ մեզ»։

Զար Մուշթարին

(Կը շարունակի)

ԹՈՔԱԽՏ

Թոքախտը, հիւանդութիւն մէ որ, ինչպէս որ շատ անգամ անասուններուն նոյնպէս այ մարդոց կը յարձակի, միևնոյն ժամանակ փոխանձիկ է և փոխանձող նիւթը «Թոքախտի պասիլ» կը կոչի և ասոնք այնչափ փոքր են որ հաղիւ ամենազօրաւոր մանրադէտներու միջոցաւ կը տեսնուին, իսկ այս փոխանձիկ նիւթը երբոր մարմնոյ որ կողմը որ մտնէ հոն անմիջապէս հիւանդութիւն մը յառաջ կը բերէ, որ թէպետև նախ, տեղական կըլլայ բայց քիչ ժամանակ վերջ պասիլներու քայքայիչ յատկութիւնը շնորհիւ կրնայ ամբողջ մարմնոյ մէջ տարածուել և զայն հիւծել, ինչպէս որ շատ անգամներ կը տեսնուին տպայոց վրայ որ առաջ կուգայ, մարթին տակ, աչքի, ականջի, ոսկրներու, յօդուածներու մէջ և այն տանը խոյլ «scrofule» անունը կառնէ, իսկ չափահասներուն մէջ ընդհանրապէս, Թոքերուն մէջ կը յարձակի և Թոքախտ անունը կառնէ որ այս ալ երբեմն շուտով կաճի և «արագընթաց Թոքախտ, phtisie galopont» անունը կառնէ, իսկ երբեմն ալ շատ կամաց կաճի և որ այս վերջինը ամենէն շատ կը տեսնուի:

Գալով պասիլներուն ասոնք մարդոց մարմնոյն մէջ առաջ կուգան Թոքախտաւորներու մաղասէն (պաղլամ) և Թոքախտաւոր կովերուն կաթէն, որովհետև Թոքախտաւորի մը հիւանդութիւնը երբոր բաւական յառաջացած է նա կրնայ օրական միլիոնաւոր պասիլներ արտադրել, իսկ այդ արտադրութիւնը որ մաղասի միջոցաւ կարտաքսուի, չորնալով փոշի վիճակին կը վերածուի և դիւրութեամբ օդին մէջ բարձրանալով, քիթի, կոկորդի, և Թոքերու միջոցաւ շնչառութեան մէջ կանցնի բայց պէտք է գիտնալ թէ հիւանդութիւնը չի փոխանձիր, ոչ վարակեալի մը մօտ դտնուելով և ոչ ալ անոր արտաշնչութենէն և կամ քրտինքէն:

Թոքախտը ինչպէս որ վերը ըսի շատ անգամ անասնոց մէջ ալ կը պատահի բայց բարեբաղդաբար ամեն Թոքախտաւոր կովերուն կաթին մէջ պասիլ չի գտնուիր նոյն իսկ երբոր հիւանդութիւնը բաւական յառաջացած ըլլայ քիչ կը պատահի որ մի փոքր քանակութեամբ գտնուի, բայց թէ որ անպիտանին ծիծերն ալ վարակուած են, որ շատ անգամ կրնայ պատահել, այն ատեն առաջին վայրկեանին իսկ մեծ քանակութեամբ պասիլներ կը գտնուին կաթին մէջ: Ուրեմն քանի որ ոչ ոք կրնայ վստահել հրապարակի կաթերուն մաքրութեանը վրայ անոր համար այն անձինք որոնք դժուարամարսութեանց տրամատիր են, կը յանձնարարեմ որ հում կաթ խմելէ զգուշանան, ինչպէս նաև նորածիններու համար ալ խիստ ուշադրութիւն ընելու է այս մասին և նոյն իսկ այն մայրերը որոնք Թոքախտաւոր են նոյնպէս պէտք է զգուշանան իրենց զաւակներուն կաթ տալէն: Ասոնցմէ զատ Թոքախտի պասիլը շատ անգամ Թոքախտաւոր անասնոց մսին մէջ ալ կը դտնուի մանաւանդ կովերուն և խոզերուն, իսկ քիչ անգամ կը պատահի որ ձիերը այս հիւանդութենէ վարակուած ըլլան և շատ հաղուադիւտ է որ ոչխարները և այծերը ունենան մինչդեռ շատ անգամ թռչնոց մէջ կը դտնուի:

Գ. Բարաբեան

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դավրէժ 3 ապրիլ 97

Ասող-Արևելեանի խղճակից պ. Սալի գրուածքը կարդացի, իրը պատասխան Շաւղի № 20-ում իմ գրած յօդուածին, որով հերքել էի, պ. Սալի յօդուածը, որը գրուել էր Ասող-Արևելեանի մէջ:

Ինչու էք գարմանում պ. Սալ, պարսկական առակները ոչ մի ժամանակ յօդուածների էֆէկտը չեն ոչնչացնում, բայց եթէ ձեզ դուր չեն գալիս, ձեր ախորժակի կամ ճաշակի համեմատ քեզ գրած, ես մեղաւոր չեմ, բայց այս յօդուածիս մէջ կաշխատեմ մի առակ գրել որ ոչ թէ միայն յօդուածիս էֆէկտը չոչնչացնի այլ մի ուրիշ լաւ յատկութիւն ես կունենայ, այսինքն կամ դու կը նմանես այդ առակին կամ թէ այդ առակը կը նմանի քեզ:

Պ. Սալը 3—4 չքաւորներով չի բաւականանում, նա առարկում է, որ Դավրէժում 30—40 չքաւոր երեխաներ կան այդքանի համար պէտք է հոգալ և միևնոյն ժամանակ պ. Սալը հանդուցեալ Ասող-Արևելեանի մէջ կէտ առ կէտ բացադրել է որ չքաւորների թիւը աւելանալով Մ. պարտէզում ոչ մի աւելորդ ծախսերի մէջ չի քցել ընկերութեան. մի քիչ ներքեւում ասում է, որ նոքա արդէն վարձել են մի բակ (300 երեխեքի տեղ) և մի վարժուհի փոխանակ 20 երեխայի թող լինի 50—60 նոցա համար ոչ մի նշանակութիւն չունի յետոյ դիմելով ինձ հարցնում է, պ. առակախօս այժմ քեզ եմ հարցնում ինչ աւելորդ ծախքերի մէջ կը դցէ ընկ.

Պ. ձեր հաշուով ոչ մի ծախսի մէջ չի դցել իսկ իմ կարծիքով, հետևեալ աւելորդ ծախսերի մէջ կը ձգէ: Նախ և առաջ մի վարժուհի չի կարող մեն մենակ պարապել 60 երեխայի հետ Մ. պարտէզում և 20—25 օրիորդ և տիկնանց հետ արհեստանոցում, վարչութիւնը եթէ ձեր ասած 30 չքաւորներին ընդունէ, այն ժամանակ պէտք է վարձէ նմանապէս մի ուրիշ վարժուհի առնուազն 120 թիւման ռոճիկով. մի աղախին 36 թիւման, մի ծառայ 30 թիւման և միևնոյն ժամանակ այդ չքաւոր երեխաներին հարկաւոր են հագուստներ, այն հագուստներից, որից հագնում են Մ. պարտէզի երեխաները, առ նուազն 200 թիւման աւելորդ ծախսունի, պ. Սալ. այժմ դիմելով քեզ եմ հարցնում պ. դաղարկախօս ինչպէս էք բացադրել Ասող-Արևելեանի մէջ:

Պ. Սալը, շարունակում է բացի չքաւոր երեխայոց չընդունելը կայ մի ուրիշ փաստ ևս, որ սոյն Մ. պարտէզի արհեստանոցում վճարող աշակերտուհիների հետ սովորում էր և մի չքաւոր կին (անունը յիշել աւելորդ է իմ կողմից որովհետև դիմակը կը պատուի) որին մի շաբաթ յետոյ պատասխանեցին, ասելով որ սա լաւ և շուտ սովորող է, կը սովորէ և յետոյ ինքը կարեր կը վերցնի կարելու և այնուհետև արհեստանոց քիչ կարեր կը բերեն, ահա սա էլ երկրորդը էլ բաւական:

Պ. Սալ պէտք է ուղիղն խոստովանած, որ մի առակ պիտի գրեմ այստեղ, որը ոչ թէ յօդուածիս էֆէկտը կը կորցնէ, այլ ձեր ճաշակի համեմատ կը լինի, աղուէսը միշտ իր պոչն վկայ կը բերէ: Դուք հետևել էք այս առանձին և վկայ էք բերում ձեր մի բարեկամուհուն, բայց ցաւում եմ որ այդ վկան բացի քեղանից ոչ ոք չընդունել: Այժմ կարծեմ տեղն է որ ձեր գրած իմ հասցէին խօսքերը ուղղեմ ձեզ: Պ. Սալ գրում էք թէ մի չքաւոր կնոջ պատասխանեցին արհեստանոցից, դու մի բաւարարութիւն չես տալիս մեզ, և դրանով դուք չէք կարող ապացուցել թէ այն, Մ. պարտէզում չքաւորներ չեն ընդունում և առանց կարմրելու դորանով հպարտանաք և օրինակ բերէք ձեր մի բարեկամուհուն, այսօր երբէք ձեր գրածներին չի համապատասխանում:

Մենք գրում ենք թէ Մ. պարտէզում 3—4 չքաւորներ կային, դուք գրա դէմ բողոքում էք և դա ձեզ բաւարարութիւն չի տալիս, իսկ դուք խօսքը Մ. պարտեզից փոխելով արհեստանոցի վրայ էք սկսում խօսալ, որտեղից հանել են ձեր մի բարեկամուհուն ինչ ինչ պատճառների համար, որը ձեզ լաւ յայտնի է և դուք կեղծում էք դա իսկական պատճառը ինչու, որովհետև..... եթէ գրելու լինիք ձեր ով և ինչ լինելն ես կը յայտնի: Նախ եթէ բողոքում էք 4 հոգիների դէմ, որոնք ձեզ բաւարարութիւն չեն տալիս դուք գոնէ 4-ից աւելի, այսինքն ձեր ձեռքումն պէտք ունենայիք 5 վկաներ, որով բողոքէիք և գրուածներդ հաստատէիք, այդ փաստը ուրեմն չունէք և ես իրաւունք ունեմ ձեր գրած խօսքերն ձեզ հետ դարձնելու, պ. Սալ յօդուածը առանց լաւ կարդալու և առանց բովանդակութեան հետ լաւ ծանօթանալու ինչ ուզում գրում էք, աշխատելով թերթի սիւնակն լցնելու ու ձեր կեղծ ստորագրութեամբ յօդուածը դուրս տալու:

Մինաս Ղասեանց

Բարֆրուշ 16 մարտ 97

Վեհափառ Շահի մահուան համար Թէհրանում տարածուած բարեբաղդաբար սուտ լուրը մեզ նոյնպէս հասած էր, գուցէ և Պարսկաստանի մի ծայրից միւս ծայրը: Այդ լուրը մեզ փոքրաթիւ հայերիս, չեմ կասկածում որ ամբողջ պարսկահայերին, սաստիկ վիշտ պատճառած էր, բարեբաղդաբար այդ լուրը հերքուեց, ուստի և վիշտերին փոխարինեց հրճուանք, ուրախութիւն և բարեմաղթութիւններ. Վեհ. Շահի կենաց համար երկարակեցութիւն, որի հայրական խնամքով և արծի հովանի թեւերու տակ պարսկահայը ապրում է ապահով ազատ և բաղդաւոր:

Միահամուռ և անխտիր բողոքում ենք այդ լուրը տարածող սրիկաների դէմ, այդպիսի սրիկաները, ովքեր որ լինին, մահուան պատժի են արժանի, որ մի խաղաղ և հանգիստ պետութեան մէջ, ուր ազգեր անխտիր ապրում են ապահով, խառնակութիւններ ստեղծելու չար դիտաւորութիւնները ունին:

Հայկազ

Դավրէժ 31 մարտ 97

«Նոր Դար»-ի թղթակից տիրացու Դասպարը (Պալուսի բաղնի) որի կեղտերը ձեզ արդէն քաջ յայտնի է, մօտ օրերս գնաց Ռուսաստան:

Ցաւսով ենք որ Նոր Դար-ի խմբագրութիւնը բացատրութիւն կը պահանջի այս սուտ արարքի համար, որով նա վերաբերեալ է դէպի Նոր Դարը և որը երբէք պատիւ չէ բերում խմբագրութեանը: Այսինքն աւելի ազան գնով բաժանորդագրութիւն է բացել այն է վեց ռուբլիով:

Ընթերցողը թող երբէք չը զարմանայ այս դէպքի վրայ, քանի որ վեց ռուբլիով գնողները, իրանք արդէն այդ վկայում են և քանի որ, թէ նրանից թէ Նոր Դարից այդպիսի բաներ սպասելի են միշտ: Միայն մեզ ցանկալի կը լինէր եթէ այդպէս մի զգալի փոփոխութեան է ենթարկուել Նոր Դար-ի բաժանորդավճարը այդ իմանալ հրապարակաւ:

Տեղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 6-ին կիրակի օրը, խորհուրդը Վեհ. Շահի հրամանի համաձայն, իր այն օրուայ նիստի մէջ որոշեց վերջնականապէս որ ամսոյս 8-ին երեքշաբթի օր լուսնոյ տարուայ հաշուով Շահի սպանման տարեդարձին իսկ մերը ապրիլի 19-ին Հանդ. Նահատակ Նասրէդդին Շահի յուղարկաւորութիւնը կատարուի, որին ամփոփելու էին Շահաբդուլազիմ ուխտատեղիում, ուր նախապէս շինուել էր նրա համար պարտ ու պատշաճ և մեծահարթաբ դերեզմանը նրա սպանման ճիշտ միջավայրում; Յուղարկաւորութեան հանդէսի սկիզբը որոշուած էր ժամը մէկ և կէսին, բայց ինչ կասէք, որ նոյն օրն իր լոյսն աւետեց անձրևոտ ամպերով, կարծէք թէ երկինքն էլ ուզում էր մասնակցել այդ սգոյ յուղարկաւորութեան իր արտասուքի ու թախծալի դէմքով: Յորդառատ անձրևի պատճառաւ յուղարկաւորութիւնը յետաձգուեց: Ամսոյս 9-ին պաշտօնական դեկուցման ամսոյս 10-ին յուղարկաւորութեան տեղի ունենալը յայտարարուեցաւ, որ պիտի սկսեր ճիշտ ժամն 12-ին: Թողնելով այն ոգևորութիւն, որով գրգռած բոլոր Թէհրանը (առ նուազ 300,000 հոգի) իր ինչք ու տուն բոլորը Աստծուն յանձնած եկել էր, իր յիսնամեայ Տէր Թագաւորին վերջին հրաժեշտը տալու և նրա կորուստը սգալու: Թողնելով և այն որ պարսիկ ժողովուրդը հասկացաւ իմանալ թէ ինչ է մի բարի Թագաւոր, աւելորդ չենք համարում մի մասնաւոր նկարագրութիւն անել Պարսկաստանի համար նորութիւն և առաջին անգամ տեղի ունեցող այդպէսի մի շքեղ հանդէսի:

Յուղարկաւորութիւնը սեղի սնէր և սկսում էր Ալմասիայի փողոցից, ուր սեղի ունէր արքայական գնացքը և դուտ պաշտօնական յուղարկաւորութիւնը, ուր մուտքը նշանակուած էր տոմսակներով, ցէրէմօնեայի նախարարութիւնից: Ալմասիայի դռան (որ նայում է դէպի հիւսիս) աջ կողմում տեղ նշանակուած էր օտար պետութեանց դեսպանական մարմնոյն, մէջ տեղը տէրութեան նախարարներին իսկ ձախ կողմում մեծ իշխանները սրանց առաջ աջ ու ձախ կողմում, բարձր հոգևորականութիւնը, որոնց առաջ էր Ն. Վ. Մոզաֆարէդդին Շահը տխուր ու տրտմալից, որոյ առաջից ընթանում էր Նահատակ Վեհ. Շահի մարմինը գրուած Հնդկաստանի ոսկեհուռ զորձուածներով և թանկագին շալերով զարդարուած մի շքեղ 12 սև ձիերով լծուած դիակառքում, որ կրում էր միևնոյն ժամանակ և նահատակ Թագաւոր հօր Թագաւորական շքանշանները, Թուրը, Ղրան կայլն: Դիակառքի առաջը տեղ բռնած էին աջ կողմից հորիզոնական ձևով, պոլիցիալի մինիստր, Հաջէր Դովլէն, Նայէր էդ Դովլէն, Զահիր էդ Դովլէն (ցէրէմօնեայի նախարար) և պատերազմական նախարար Ամիր Բէհատոր Ջէնկը: Փողոցի երկարութեան աջ կողմում տեղ ունէին հերթով Ղաջար ցեղը, լաշկար նիսները, զոլամ փիշխիմաթները, արքունական Դարոլֆոնսն

զպրոցը (որի հետ պիտի լինէր և հայ աշակերտութիւնը) և հեռագրատան մինիստրութիւնը, ձախ կողմը Մոստոֆիները, արտաքին գործոց նախարարութիւնը, փոխանորդ հայրը ականաւոր հայերով (???!!!), արք. զինուորական զպրոցը և փոստային նախարարութիւնը: Մէջտեղում ցէրէմոնիայի ֆարրաշխանէին, փոլիցիայի և էհթէսարի նախարարութեանց անդամները, աջ կողմից դէպի Նասէրիէի փողոցը դարձած էր փառահեղ վրաններ, ուր ընդունւում էր դեսպանական մարմինը: Արտաքին գործոց նախարարի հաճութեամբ փոխանորդ հայրն էլ սկզբում ընդունեցաւ դեսպանական մարմնում: Ն. Գ. Վեհափառութիւն Շահը դեսպանական մարմնոյ հետ քիչ խօսակցութիւնից յետոյ, ոտքի տկարութեան պատճառով հաղիւ կարողացաւ Ալմասիայի դռնից 6—7 քայլ առնել դէպի առաջ, ուրտեղից աջ կողմ անցնելով ճանապարհ տուաւ վեհափառ յուղարկաւորութեան: Այդ ժամանակ դիրքերը փոխեցին մեծ իշխաններով շրջապատած դիակառքի ետեւից գնում էին նախարարապետ Էմինը Դավլէն, փոխանորդ հայրը կողքին իր նախարարներով, ապա հոգևորականութիւնը և ապա դեսպանական մարմինը: Արքայական պաշտօնական յուղարկաւորութիւնը տեւեց մինչև Թոփխանէի դուռը որտեղ դեսպանական մարմինը և փոխանորդ հայրը, արտաքին գործոց նախարարի առաջնորդութեամբ բարձրացաւ նոյն դռան վերնայարկը, սպասելով իրենց կառքերին, Արքայական յուղարկաւորութեան, այդ տեղից դիմաւորեց զինուորականութիւնը, մուղիկանների խմբերը և այլն, և նոյն շքով անցաւ Զրաղկաղի և Դուլաբա փողոցները ամբոխի ամենաստւար բազմութեան միջից և անցնելով երկաթուղու կայարանից ուրտեղ դերը էին բռնել հայ, հրէայ, պարսիկ և այլն դասակարգերը, ժամը երկու կէսին դուրս ելաւ քաղաքի հարաւային դռնից: Քաղաքի դռնից մինչև Շահ Արդօլազիմ ուխտատեղին (8 վերստ) ճանապարհի երկու կողմից երկու սեռից պարսիկ ժողովրդոյ տիրել էր դաշտը: Կարգապահութիւնը օրինակելի և խիստ կանոնաւոր էր: Զանազան պսակներ զարդարում էին դիակառքը, որի մէջ նաև աչքի է ընկնում հայոց կողմից դրուած պսակը, դիակառքի վրայ:

—

Ինչպէս լսում ենք, վճռւել է Թէհրանի կրօնական ժողովում որ առաջիկայ շաբաթ պէտք է հոգեհանգիստ կատարւի հանգուցեալ Շահի համար, Դարվազայ Ղազվինի եկեղեցում:

—

Վստահելի աղբիւրներից լսում ենք, որ Թէհրանի թատերասէրաց խումբը շուտով մի ներկայացում պիտի տայ պարսկերէն լեզուով յօգուտ Հայկազեան վարժարանին:

—

Արդէն Թէհրանում լուր է տարածւել որ մի ինչ որ խումբ պատրաստւում են մէկ տպարան բերել տալ եւ հրատարակել մէկ հայերէն թերթ «Մողափար» վերնագրով. յաջողութիւն ենք ցանկանում:

—

Որպէս լսում ենք Թէհրանի դարվիշ վարդապետ Շաւարինի Թէհրանի կրթասէրաց ընկերութեան նախագահ, ատենապետ, հմամարակալ, քարտուղար, դանձապետ, խորհրդական և վարդապետարանի իւղոտ պնակները երազող և վարդապետի խորհրդական, իսկ թատերասէրաց խմբի բեմի Լանկ Թեմուր և այլն, և այլն, Միրզա Միքայէլը, մտադիր է ի նպաստ Շաւարինի կրթասէրաց ընկերութեան՝ մայիսի սկիզբներում «Անիի կործանում» ներկայացումը տալ: Խորհուրդ ենք տալիս որ «Սև Հողերի» ներկայացումից այսուհետև փորձառու դարձած, այլ ևս կամաւոր և որ առաւելն է ապառիկ տոմսակներ չի բաժանել, մանաւանդ որ կը զգուշանայ տեղապահ վարդապետների հովանաւորութեան տակ դնել, իսկ եթէ կուզի պարոնը որ թատրոնը կամ բիւֆէտը շահի, աւելի լաւ է որ ո և է մի վաճառատան գործակատարի հովանաւորութեան յանձնել ամեն բան:

—

Ինչպէս լսում ենք մի քանի տիրայուներ և դէրվիշներ պատրաստւում են քահանայ և վարդապետ ձեռնադրւելու. եթէ այս լուրը ճիշտ է, խորհուրդ կը տայինք թէ հրանցիներին որ մէկ անկելանոց պատրաստեն քաղաքից դուրս դրանց ընդունելու համար:

—

Շիրազից մեզ գրում են որ, այնտեղի եկեղեցական կալւածները կատարեալ անտէրութեան են մատնուած իսկ հոգևոր կառավարութիւնը ոչինչ ուշադրութիւն չը դարձնում դրա վրայ:

—

Ինչպէս մեզ գրում են Ն. Զուղայից այնտեղի հոգևոր կառավարութիւնը կատարեալ անգործութեան է մատնուած այնպէս որ մի քանի գործեր երեսի վրայ են ընկած, իսկ կօնսիստորեան իր քէֆի ետեւից է ընկած:

—

Ինչպէս լսում ենք. այս օրերս տեղիս տաճկաց դեսպանատունը մի շրջաբերական է ուղարկել քաղաքիս ամեն դեսպանատները, որով պաշտօնապէս յայտարարում է թէ տաճիկները յունաց յետ ունեցած իրանց պատերազմում մինչև օրս ամեն տեղ յաղթող են հանդիսացել: (???)

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Աթէնք. 14 Յոյները խոստովանւում են որ արշաւողները վերադարձել են սահմանից և թէ նրանք մեծ կորուստ են ունեցել հետ դառնալում:

Աթէնք. 15. մի քանի յոյն խմբեր դեռ մնում են Մակեդոնիայում և Թեսալիայի բոլոր ճանապարհները բռնել են,

Կ. Պոլիս. 15. Անցեալ օր, մինիստրների ժողովում վճռուեց որ խստիւ պիտի վերաբերուեն դէպի Յունաստանը, եթէ, վերջինս սահմանագլխի վրայ դարձեալ շարժում անի:

Կ. Պոլիս 16. Թրքաց զօրախմբի հրամանատարը յայտնում է որ, Յունաց սահմանագլխի վրայ իր բռնած դիրքը չի կարող շարունակել, և իրաւունք է խնդրում մտնել Թեսալիայ: Մինիստրների ժողովը ընդունում է այս իրաւունքը տալ, բայց սպասում է Սուլթանի արտօնութեանը:

Բ. Դուռը. բողոքել է պետութիւնների յայտագրի դէմ որ, թէ «Թրքիային թոյլ չի տուել որ և է մի օգուտ քաղել, թէ Յունաց հետ պատերազմելու լինի»:

Լոնդոն. 16. Ադմիրալ Բասընը, 9 սքադրոն նաւերով յանկարծակի հասաւ Դուրբան: Այս ոյժի ուր երթալը կամ ինչ նպատակ ունենալն, դեռ յայտնի չէ:

Մեծ ընդհարում տեղի ունեցաւ թրքաց զօրքի և 400 արշաւանք անողների միջև, Պրանիայի մօտերը: Մի ուրիշ խումբ էլ որ սահմանագլխից անցաւ սաստիկ կռիւ ունեցաւ. Թրքաց զօրքի հետ, որ վերջինս, կորցրեց 100 հոգի, բացի նրանցից որ գերի տարուեցին:

Կ. Պոլսում. 17. Բ. Դուռը նոր մի շրջաբերականով յայտնում է պետութիւններին որ, իբր թէ Կրէտայի այժմեան դրութիւնը անտանելի է, և թէ արիւնհեղութիւնները որ շարունակւում են այնտեղ, գուցէ շուտով կը գրգռի Մուսուլմաններին: (այսինքն իր տերութեան մէջ ապրող մուսուլմաններին:)

Լոնդոն. 17. Յունաց սահմանագլխի վրայ տեղի ունեցած կռւի վերաբերմամբ (որը շարունակւեց այս օր 4. ժամ Նեղէրօի մօտ) զանազան լրեր են հասնում, թէ այդ կռւի մէջ երկու կողմից էլ օրինաւոր արտիլերի էր գործածւում: Յոյները բռնեցին Թրքաց ստասիոնները, և Թրքերին յետ մղեցին: Թէ այս կռւի կորուստը ինչքան է, դեռ յայտնի չի:

Բ. Դուռը, յայտագրել է դեսպաններին թէ Թրքերը կամաւ յետ գալ ձան ցոյց տալու և հաստատելու համար որ, ոչ թէ իրենք այլ յոյներն են ապստամբներն:

Լոնդոն 18. Իտալիան վճռել է ուղարկել 2 Բատալիոն հեռեակ զօրք, և արտիլերի դէպի Յունաստան:

Կ. Պոլիս. 18 Այստեղ ձայն կայ որ պատերազմը բացւել է Թրքիայի և Յունաստանի մէջ:

Լոնդոն. 18 Յունաց ամբողջ սահմանագլխի վրայ կռիւ է ոկսւել: Փրիվեսայի Թրքաց բատարիները ընկզմեցրել են Յունաց այն շոգենաւին, որը Ամբրաքից հեռանում էր պն առաւօտ. մարդիկը փրկւեցին և Յունաց նաւատորմիղները հիմա բոմբարդ են անում Փրիվեսան:

Յոյները, տիրեցին Մանէքսի (Մակեդոնիայում) դիրքը:

Լոնդոն. 19. Յունաց շոգենաւի ընկղմելը ճշտութիւն չունի:

Փրիվիսայի Թրքաց բերդը, կործանեց Յունաց ստասիոնը որ է Աքտիօն. պահապաններից բաւական սպանուեցին: Այդ դէպքի վրայ Յունաց նաւատորմիղը բոմբարդ արեց Թրքաց բերդերը: 2000 յոյներ ցամաք իջան և յառաջանում եմ Փրիվեսայի վրայ:

Դէլլեանեսը դէպուտատների ժողովում յայտնեց որ, իբր թէ Թիւրքիան պատերազմ է առաջարկել Յունաստանին և թէ վերջինս ընդունել է առաջարկը:

Աթէնքում լինող գերմանացւոց մինիստրը յայտնում է որ, իբր թէ ինքը կը պաշտպանի Յունաստանի թիւրքերին:

Երազցի արևելեան կողմն ընկած Մալունայի անցքում ուրբաթ գիշեր սաստիկ կռիւ սկսւեց, որը 30 ժամ տեւեց. 20000 զօրք մարտնչում էին. կռւի հետևանքը դեռ յայտնի չի, բայց ըստ երևոյթին թիւրքերը շահւել են: Սակայն միևնոյն ժամանակ այսօր լուր է հաղորդւում նոյն իսկ յոյն աղբիւրներից որ յոյները իրենց ներքոյ պահել են Մեներին որը իբրև բալանի մի ամբողջ դրութեանը:

Յունաց նաւատորմիղը բոլորովէն աւերեց Փրիվեսան և լռել տւեց այնտեղի բերդերին:

Արթաում, յունաց արտելիներն լռեցրեցին (տիրեցին) Թրքաց 2 բատարիները բայց դեռ մնում է ամենամեծն երրորդը:

Լոնդոն. 19. Նիզոբոսի արևմտեան կողմն ընկած Կարիայում տնցեալ շաբաթ որ կռւեցին յոյներն ու տաճիկները յոյները իրենց տիրած բերդերը դեռ պահում են:

Յունաց խմբերը իջել են Թասոս կղզու լանդիմանի ցամաքը և դիտաւորութիւն ունեն բռնել Կ. Պոլիս Սալոնիկոյի երկաթուղին:

Լոնդոն. 20. Ֆրանսիան յանձն է առել տաճկաստանում եղած յոյներին պաշտպանել:

Թիւրքերը ասում են որ, իբր թէ իրենք 200 հոգի կորցրին Մալունայի անցքի վրայ եղած կռւում, և թէ յոյները կորցրել են 1000 հոգի: Կռիւը շարունակւեց ամբողջ երկու օր:

Յունական մի մեծ ոյժ մտաւ Եպիրոս Փրիվիսայի վրայ կրակ բանալը շատ թոյլ է տալ երթում, ծովի կատաղութեան պատճառով:

Լուր կայ որ Սերբիան, Բուլգարիան և Մոնտէնիգրոն, Ռուսիայի խնդրանաց համաձայն, խոստացել են չը միջամտել Յունա—Թրքական պատերազմում:

Ըրտնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՒԻԹ Յ. ԲՕԼԴԵԱՆՑ
ՊԱՏԻՒ ՈՒՆԻ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
ԹԷՀՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ
Ն Ը
Ալլադովի փողոցում պատկերահան Մ. Սեվրուգինին տան կից, բացել է մի խանութ ուր վաճառւում է
ՊՂՆՋԵԱՅ ԵՒ ՈՍԿԵԱՅ
ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ
և այլն մատչելի գներով